# Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

**ք. Սևան** 27.09.2024

2024թ.-ի սեպտեմբերի 27-ին, ժամը 12:00-ին «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի /21.06.2014թ. ՀՕ-110-Ն/, ինչպես նաև ՀՀ կառավարության 19.11.2014թ. N 1325-Ն որոշմամբ սահմանված կարգով (չորրորդ լսում) Գեղարքունիքի մարզի Սևան խոշորացված համայնքի համայնքապետարանի շենքում տեղի է ունեցել «ԴԻՁԻԴԱԹԱ» ՓԲ ընկերության կողմից նախատեսվող արևային ֆոտովոլտային էլեկտրակայանի նախագծի Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ չորրորդ հանրային քննարկումը:

**Ելույթ ունեցան՝**

- Բացման խոսքով հանդես է եկավ համայնքապետարանի քաղաքաշինության և հողաշինության բաժնի պետ Մեսրոպ Մկրտչյանը:
- ՀՀ ՇՄ «ՇՄԱԳՓ» ՊՈԱԿ-ի փորձագետ Գոհար Մինասյանը ներկայացրեց փորձաքննական գործընթացի իրավանորմատիվային և ընթացակարգային մասը: Նա նաև ներկայացրեց նախատեսվող գործունեության Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության ընդհանուր բովանդակությունը և պլանավորված կառավարման մեխանիզմները: Փորձագետը հակիրճ ներկայացրեց նաև գործունեության բնապահպանական մշտադիտարկումների պլանը:

ՀՀ ՇՄ «ՇՄԱԳՓ» ՊՈԱԿ-ի փորձագետ Գ. Մինասյանը հավելեց, որ լսման հետ կապված իրականացվել է պատշաճ ծանուցում:

Շահագործման նախագծի բովանդակային և տեխնիկական մասը ներկայացրեց ընկերության ներկայացուցիչ՝ Մերի Ղազարյանը:

Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության մեջ համաձայն օրենքի 16-րդ հոդվածի ներկայացված են տեխնիկական և տեխնոլոգիական լուծումները, ինչպես նաև նախնական բնապահպանական միջոցառումները, որոնք

ուղղված են մեղմելու, նվազեցնելու և կանխարգելելու հնարավոր ազդեցությունները շրջակա միջավայրի վրա:

**Հարցեր և պատասխաններ**

1. Համայնքի ներկայացուցիչը հարց բարձրացրեց կապված վտանգավոր թափոն եզրույթի հետ՝ փորձելով պարզել թե որքանով է նշյալ թափոնատեսակը վտանգավոր բնակչության համար:
   Պատասխանը հնչեց, որ այն սպառնալիք չէ հարակից բնակչության կամ աշխատակիցների համար, պարզապես դիտարկվում է վտանգավոր, քանի որ իր հետ կապված գործողությունները պահանջում են հատուկ լիցենզիա:
2. Հարց է բարձրացվում կապված պլանավորվող սոցիալական օժանդակության հետ:
   Ընկերության տնօրեն Վահե Կիրակոսյանը ներկայացնում է, որ ինչպես նախկինում նշվել է, Ընկերությունը պատրաստակամ է շուրջ 2 միլիոն դրամի սահմանում սոցիալական օժանդակություն ներկայացնել համայնքին: Ընկերության ներկայացուցիչները նշում են նաև, որ արդեն իսկ համայնքից աշխատանքի են ընդունվել թվով վեց աշխատակից:
3. Առաջարկ է արվում հանրային լսումը հետաձգելու, քանի որ Գագարին վարչական միավորի ղեկավարի տեղակալը կարծում է, որ համայնքում կան բնակիչներ, որոնք առարկություններ ունեն, նա նշում է, որ լավ կլինի նրանք ներկա գտնվեն և ներկայացնեն իրենց տեսակետները:
   Պատասխան է հնչում, որ պատշաճ ծանուցում է իրականացվել, ուստի ցանկացածը կարող էր գալ և ներկայացնել իր դիրքորոշումը:
4. Ներկայացվում է տեսակետ, որ համայնքի ներկայացուցիչները առարկություն ունեն այդ տարածքը նման նպատակով օգտագործելու հետ:
   Պատասխան հնչեց, որ բոլոր դեպքերում այդ տարածքը հանդիսանում է մասնավոր սեփականություն և համայնքային ընդհանուր օգտագործման տարածք չէ:
5. Գագարին վարչական միավորի ղեկավարի տեղակալը կարծում է, որ համայնքում կան բնակիչներ, որոնք առարկություններ ունեն տարածքում առկա այլ կազմակերպության հետ, որը կապվում է նախատեսվող գործունեության հետ:

6. Ընկերության տնօրեն Վ. Կիրակոսյանը ներկայացնում է, որ նրա նշած կազմակերպությունը առնչություն չունի իր կազմակերպության հետ և նախատեսվող գործունեության հետ:

Ներկայացուցիչների միջև երկար քննարկում է ծավալվում կապված սոցիալական աջակցության տարբեր առաջարկների հետ, որոնք նախկինում հնչել են, սակայն ցանկալի արձագանք չեն ստացել համայնքից: Համայնքի ներկայացուցիչները շարունակում են առաջ քաշել մեկ այլ ընկերության գործունեության հետ կապված բողոքները:

**Առաջարկություններ**

Առաջարկություն է եղել ներքին քննարկում կազմակերպել Գագարինի բնակչության հետ և որոշ բացատրական աշխատանքներ տանել: Նախաձեռնող Ընկերության տնօրենը նշեց, որ հինգօրյա ժամկետում, եթե առաջարկ լինի, նա կարող է մասնակցել հանդիպմանը և ներկայացնել բոլոր հարցերի պատասխանները: Նա նաև ևս մի անգամ նշեց, որ ընկերությունը պատրաստ է համակարգչային սրահ հիմնել համայնքի համար, սակայն այդ դեպքում ևս պատշաճ արձագանք չի եղել համայնքից:

**Քննարկումների պատասխանատու**
**համայնքի ղեկավար** ______________ Ա. Աշոտյան

**Նախաձեռնող՝ «ԴԻՋԻԴԱԹԱ» ՓԲԸ**
**տնօրեն** ______________ Վ. Կիրակոսյան